

և Երեսունինն օր ճամբորդելէ վերջը՝ յուլիսի 9-ին հասաւ Կահիրէ :

Սուլթանը նախ պատիւներով ընդունեց Հայոց թագաւորն ու հետեւորդները, և առջարկեց — ինչպէս Ընդլիթիմուր ալ առջարկած էր — մահաէզական կրօնքն ընդունիլ, խոստանալով մեծամեծ պատիւներ ու պաշտօններ, բայց գերիներու մերժումին վրայ՝ բոլորն ալ Եգիպտոսի բանակներուն սպարապետ Սէյֆ-էզզին Տաշաիմուր էլ-Ալայ էզ-Գաւազար ամիրային հսկողութեան յանձնեց: Տաշաիմուր Կահիրէի հայ բնակչութեան(1) երաշխաւորութեան տակ ազատ արձակեց Լեւոնը, պայմանով որ Լեւոն Կահիրէէն դուրս չելլէ(2): Իսկ հետեւորդները բոլորովին իրենց կամքին թողուց որոշել իրենց երթալիք տեղը: Կաթողիկոսը մի քանի իշխաններու հետ Սիւ վերադարձաւ. պզտիկ խումբ մըն ալ, որ կը բաղկանար Մարիամ դշխոյէ, Սոհիէրէ և իր կնոջմէն, ինչպէս կըսէ Գարդել (Երես 153), փափագեցաւ երթալ բնակիլ Երուսաղէմ, ուր՝ Հայոց ս. Յակոբի վանքին մէջ՝

(1) Եգիպտոսի մէջ ժԱ դարուն հաստատուած էր հայ գաղթականութիւն մը, որ կը հովուուէր *մասնաւոր* կարողիկոսով մը: Առաջին կարողիկոսն Եղած է Գրիգոր Վկայասէր (1075), իսկ երկրորդ և վերջինը՝ իրեն հետորդին Գրիգոր (1076), որ ձեռնադրուած է նոյն իսկ Վկայասէրի ձեռովը, ինչպէս կըսէ ժամանակագիրն Մասթեոս Ուոհայեցի. « Եւ էր ի բուականութեան Հայոց ՇԻԳ (=1074), և ապա զկնի այսորիկ գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպոլիս և անդուս ի Հոռոմ. և Եկեալ յեգիպտոս՝ շրջեցաւ ընդ անապասն ամենայն առաջին սրբոց հարցն և կասարեաց զամենայն փափագումն որսին իւրոյ. և հաստատեաց անդէն իւր զարոն հայրապետութեանն և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ. և բազում փառք և մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորիս ի քաղաւորէն Եգիպտոսի առաւել քան ի քաղաւորէն Հոռոմոց: Եւ բազում զօրք ժողովեցան յեգիպտոս իբրև Երեսուն հազարաց. և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կարողիկոս զՏէր Գրիգոր՝ զԲուրորդին իւր՝ և ինն Եկեալ գայր յաշխարհն Հայոց, վասն զի դեռ Եւս կենդանի կայր մայրն նորա: » (*Ժամանակագրութիւն*, ք սպ., եր. 211):

(2) Ե. Օ. Լոնդոնի « Նոր կեանք » հանդեսին մէջ (1899, եր. 354) յօդուած մը գրելով՝ Յիսուսեան կրօնաւորի մը ցուցումին վրայ կուգէ հաստատել, որ մեր Լեւոն վերջին քաղաւորին բանաստեղծին (?) կը գտնուի Մանսուրայի մէջ, Մեծ-մզկիթին ֆոլը, որ « *Նուսրանի* քաղաւորներուն բանք » Եղած է: Բակուրան իրաւունքով կը հերքէ այս ենթադրութիւնն և կը պնդէ, որ ո՛չ միայն Լեւոն վերջին այլ և նոյնպէս Եգիպտոս գերի տարուած Լեւոն իշխանն ալ (եսէէն՝ Լեւոն Բ քաղաւոր) Մանսուրա չէր բանտարկուած: (*Արմենիա*, ժն տարի, քիւ. 47):